



«ԱՐՑԱԽ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ՔԱՐԵՂՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Մելիք-Ադամյան 2; ք. Երևան, ւլ. Մելիք-Ադամյան 2; 2 Melik-Adamian str., Yerevan  
Հեռ. (3471) 54-28-56

### Եղբայրական շնորհավորանքներ

Սիրելի եղբայր Ջորի Հայկովիչ, այս յոթ ամիսների ընթացքում ես, «Արցախ» հայրենակցականի բազմաթիվ անդամներ և իմ ընտանիքը գրեթե ամեն օր քո մասին էինք խոսում, և Դու հորիզոնի նման մերթ մոտենում էիր մեզ, մերթ հեռանում՝ մակընթացության ու տեղատվության գոռ ալիքների փոթորկուն համապատկերի վրա:

Արդարև, Դուք Ձեր աննախադեպ առաքելական ճամփորդությամբ աշխարհին ի ցույց եք դնում, ականջալուր եք դարձնում մեր հերոսական ու ողբերգական պատմությունը և Մեսրոպյան 36 գիր-գինվորներով, Հայաստանի ու Արցախի դրոշներով ապացուցում եք, որ մենք եղել ենք, կանք ու կլինենք: Դուք առերևույթ, թե ըստ էության, ավելի եք բարձրացնում Հայոց հնամենի ու նորանկախ երկրի հեղինակությունը անհողորդ և վճռական կամքով ոգեկոչում Սփյուռքը՝ միասնության ու համախմբման կոչ հնչեցնելով աշխարհի տարբեր ծեփերում հանգրվանած հայությանը՝ պահպանելու համար հայի տեսակը:

«Արմենիա» առագաստանավով շուրջերկրյա Ձեր ճամփորդության առաջին էտապի ավարտման կապակցությամբ եղբայրական ու կարոտալից ողջույններս ու շնորհավորանքներս Ձեզ և «Արմենիա» առագաստանավի անձնակազմին:

Եղբայր Ջորի, Աստծո օրհնանքը թող ուղեկից լինի Ձեր առաքելությամբ ողջ ընթացքում, «Արմենիայի» բոլոր անդամներին և Ձեր ընտանիքներին:

Աժ պատգամավոր,  
«Արցախ» ՀԲՀ նախագահ Հ. Հարությունյան